ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

17.09.2013թ.
210-ի 4

“Հայ Փոստ” ՓԲԸ-ի գործադիր տնօրենի
ժ/պ պարոն Հայկ Ավագյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Ավագյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. 2013թ.-ի ապրիլի 3-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնի կողմից ՀՀ քաղաքաշինության նախարարության ուղարկված պատվիրված նամակը ՀՀ քաղաքաշինության նախարարությունը ե՞րբ է ստացել,
2. 2013թ.-ի հունիսի 24-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնի կողմից ՀՀ քաղաքաշինության նախարարության ուղարկված պատվիրված նամակը ՀՀ քաղաքաշինության նախարարությունը ե՞րբ է ստացել,
3. 2013թ.-ի օգոստոսի 15-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնի նախագահ Շուշան Դոյդոյանի կողմից ՀՀ Ոստիկանության Ճանապարհային ոստիկանությանն ուղարկված պատվիրված նամակը ՃՈ-ն ե՞րբ է ստացել:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կից ներկայացնում եմ բոլոր գրությունների փոստային անդորրագրերի պատճենները:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան